

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Ոտարարագրագիրք գինում են ուղղակի
Тифлис. Редакция «Мусака»

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ինդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ երեւոյթ: Նամակ խմբագրին: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ալեքսանդրիայի ուղիակոծութիւնը: Աւստրո-Ունգարիա: Նամակ Պարսկաստանից: Արտաքին լուրեր:—ՍԱՌԵՐ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՅԻՐ-ՆԵՐ:—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱ-ԿԱՆ: Խառնայի Մէլիքութիւններ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յուլիսի 9-ին

Այս մի տարի է, որ երևանում բացված է ուսուցչական սեմինարիա: Եկող սեպտեմբերից այդ ուսումնարանում կը սկսվի ուսման երկրորդ դասընթացը:—Կը բացվի երկրորդ դասարան: Երևանի ամբողջ նահանգում եղած այդ միակ վարժարանային նպատակն է դառնալիս համար ուսուցիչներ պատրաստել և ուղարկել նշանաւոր գիւղերում բացվելի ուսումնարաններում դասատուութիւն անելու, ուսում, գրագիտութիւն տարածելու: Բայց իմ կարծիքով ուսուցչական սեմինարիան ուղղակի իր նպատակին հասնելու համար մի զլխաւոր պակասութիւն ունի. այն է, որ տեղական լեզուներից այնտեղ չէ աւանդում պարսկերէնը: Արդէն շատ անգամ խոսված և համոզմունք է դարձած այն բանը, թէ տեղական լեզուները ուսման և կրթութեան գործի մէջ առաջին և հաստատ հիմնաքարը պէտք է համարվեն: Եւ որովհետեւ տեղից ուսուցչական սեմինարիայից աւարտող վարժարանները պէտք է ծառայեն, պաշտօն ունենան գլխաւորապէս երևանի նահանգում, ուր ժողովրդի նշանաւոր տարրը կազմում են հայերը, պարսկերէնը և պարսկախօս հայերը, ուրեմն և սեմինարիայում աւանդող աւարականների թիւում առաջին տեղը պէտք է բռնառնեն:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄԱՍԻՐ ՄԵԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ հայոց մէլիքները իրանց հայտաւանների հետ, որպէս ցոյց տուցինք նախնից գլուխներում, դաղթեցին Վրաստանի, Շիրվանի և Գանձակի գաւառները, այդ ժամանակ նրանց հողերն ու գիւղերը անտէր ու դատարկ մնալով, իրաւ է, Իբրահիմ-խանը տիրապետեց, և դաղթաների տեղը լցրեց մահմեդական բնակիչներով: Բայց երբ, տարիներից յետոյ, մէլիքները իրանց ժողովրդի հետ վերադարձան դաղթականութենից, այդ ժամանակ հեռացրին մահմեդականներին և կրկին տէր, եղան իրանց վաղմի գիւղերին և հողերին:

Բայց որովհետեւ, դաղթականների մի մասը մնաց օտար երկրներում, և մէլիքներից մի քանիսի (որպէս էին Ջրաբերդի Մէլիք-Իսրայէլխանները և Տիգրակի Մէլիք-Աւանանները) վերջին ժառանգները բոլորովին ոչնչացան, այդ պատճառով, նրանց հողերը անտէր մնալով, Իբրահիմ-խանը տիրեց, այսինքն, սկսեց ինքն ստանալ մշակութեան բերքը այն մասը, որ առաջ ստանում էին այն հողերի նաակին տիրապետողները: Բայց իսկապէս Իբրահիմ-խանը միայն վաղեմի էր, և ոչ թէ սեպականատէր իր ընդարձակ նշանակութեամբ: Նա բացի բերքի մի որոշեալ մասը ստանալուց ուրիշ իրաւունքներ չուներ ոչ հողի և ոչ հողը մշակող գիւղացիների վրա: Գիւղացիները աղատ հպատակներ էին պետութեան, իսկ հողը սեպականութիւն էր գիւղական համայնքի նոյն ձեւով, որպէս ցոյց տուցինք վերևում:

Նեն հայերէնն ու պարսկերէնը: Ուղում եւ աւելացնել, որ նրանք պէտք է պարտաւորի լինեն, թէ հայ և թէ պարսիկ («թուրք») ուսանողների համար: Պարսկերէն լեզուի հայերի համար պարտաւորի լինելը անհրաժեշտ է այն պատճառով, որ նրանցից շատերը կարող են ընկնել պարսկախօս հայերով կամ հէնց նոյն իսկ պարսկերէնով բնակեցրած մի գաւառ կամ գիւղ:

Այստեղից անմիջապէս ծագում է մի հարց, թէ ինչ օգուտ պէտք է տայ պարսկերէն լեզուն գիւտութիւնների ուսումը հեշտացնելու վերաբերութեամբ, քանի որ այդ լեզուն ներկայացնում է մեծ դժուարութիւններ, ծանր աշխատանք և ամեն տեղ աւանդում է նահապետական, մուսուլման մեթոդով: Այդ հարցը, յիշատի նկատողութեան առնելու արժանի հարց է և ես այստեղ մի առաջարկութիւն կանեմ: Համաձայնելով այն մտքին, թէ պարսկական լեզուն աւանդելու այժմ մնան միմիայն թմբկաբաշտի և շատ դժուարամարտ թող պարսկերէն կենդանի լեզուին հմուտ մարդիկ, հիմնույց սկսելին նոր դասագրքեր կազմել, և այն ոչ թէ արաբական, այլ հայկական տառերով: Այդպիսի հմուտ մարդիկներից գոնէ հինգ վեցը կը գտնվին մեր կողմէ կառույց, որոնք յաջողութեամբ գլուխ կը բերեն իմ առաջարկութեան ձեւադրութիւնը: Կը մնայ միայն, որ «թուրքական լեզուն» (ինչպէս սովորական է ասել երևանում) «թուրք» այսինքն պարսիկ դասատուները այդ լեզուն աւանդելին տէրութեան ուսումնարաններում: Բայց որովհետեւ նրանք ծանօթ չեն հայկական տառերի հետ, այս պատճառով ուսումնարանական վարչութիւնը կարող էր պարտաւորեցնել նրանց մի երկու տարվայ արձակուրդներին սովորել հայկական այբուբենը: Այնուհետեւ, երբ պարսկական լեզուի դասատուները բաւականաչափ ծանօթացած կը լինեն հայկական գրերի հետ, նրանք նոր կազմած դասագրքերի միջոց, բովանդակութիւնը լաւ հասկանալով (որովհետեւ նա պարսկերէն է) յաջողութեամբ դաս կը տալին իրանց աշակերտներին:

Իբրահիմ-խանի յաջորդ Մէլիք-Խանի ժամանակ հանգամանքները փոխվեցան: Այդ ժամանակ ուսանողները թէև տիրել էին Վարազդին, բայց կալուածական հարցը, և խաների իրաւունքների չափը դեռ ևս որոշված չէր: Թողեալ այդ, ուսանողները, որպէս վրեժախնդր, խիստ բարձր կարծիք ունեին խաների նշանակութեան մասին: Այդ հանգամանքներից օգուտ քաղելով, Մէլիք-Խանը սկսեց ասել իրաւունքների բռնացնել, քան թէ որ ունէր առաջ:

Թէ խանը և թէ նրա չըպապատողները շատ լաւ հասկանում էին, որ իրանց իշխանութիւնը արդէն անցել էր,—հասկանում էին, թէ որքան ժամանակաւոր և անհաստատ էր իրանց գրութիւնը, և այդ պատճառով շտապեցին ժամանակից օգուտ քաղել:

Մէլիք-Խանը սկսեց աշուձախ իր մերձաւորներին, բարեկամներին, աղականներին ամբողջ գիւղեր, կալուածներ և հողեր պարգեւել: Նրա կամայականութեամբ ասելի վստահութիւն տուող և եղաւ ինքը իշխան Մաղաթովը, որը իբրեւ Նահանգալի—գլխաւորական զլխաւոր, ուսուցչ կառավարութիւնից նշանակված էր խանի գործողութիւնների վրա հսկելու և նոր գրաւած երկրի մէջ կարգ պահպանելու համար:

Իշխան Մաղաթովի ծագումը մինչ մասնաւորապէս ցոյց տուինք մեր պատմութեան XXXVI-րդ գլխի մի ծանօթութեան մէջ: Նրա հայրը, Մեհրաբեկ Գիւրին, հասարակ գիւղացի էր, բնակվում էր Չանախլի (Աւետարանոց) բերդում, և մի ստոր պաշտօն էր կատարում վարանդայի տիրապետող Մէլիք-Շահնազարխանների տանը: Նրա մօր եղբայր Պետրոս իւզդաշի Մաղաթխանը Մէլիք-Շահնազարխան Մէլիք-Ջուռլուի տան նահապետ (տնտեսն էր): Իշխանը կրեց իր մօր անունը, որը փոքր ինչ պատուաւոր էր, և

Այս միջոցով նպատակն արդարացրած կը համարվէր:

Համարձակվում ենք յուսալ որ կովկասեան ուսումնարանների զլխաւոր հոգաբարձու՝ պ. Եւսեփակին այս խնդիրը ուղարկութեան կանոն և խորհրդածութեան արժանի ներքէ կը համարի:

Յովհաննէս—Հեթում

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Աստուխան, 3 յուլիսի

Լաւ է անագան, քան ոչ երբէք: Ձեր պատուական և բաղմարդին «Մշակ» լրագրի տառնամայ տարեդարձի լրանալու պատճառով մեր սրտերը լցված ուրախութեամբ, դիմում ենք ձեզ, մատուցանելով ձեզ մեր անկեղծ սրտէ հնորանորութիւնը և ցանկանալով ձեզ և ձեր գործակիցներին երկար կեանք, առաւելագոյն կարողութիւն, ծոծկութիւն ձեր օգտակար ասպարիզում, որի բաղմարդի արգասիքները ժողովուրդը արդէն ճանաչած է: Բաղմայարդ «Մշակ» լրագիր է, որ ընդունում է և տարածում է մեր մէջ նոր լոյս և դաղափար, ուսումն և կրթութիւն և որ առաւել է՝ եղբայրներութեան և մարդասիրութիւն մեր անշատով և երկպառակեալ ազգի մէջ միաւորելով նորանց ի մի ամբողջը:

Այս տարեդարձի յիշատակի համար ունեմք պատու հասուցանել ձեզ ընդամեն ծրարեալ հարիւր վաթսուհին հինգ թուրք զուամբ (որ ժողովված է 'ի ձեռն իմ և պ. Չախմախանց Գ. Յ.) և խնարհաբար խնդրել, ըստ ձերդ հայեցողութեան գործածել, որպէս դուք արժանի կը գտնէք ազգի պէտքերի վրա:

Այս ընծայաբերողաց անուանքն Եղիսարէթ Պոպովնայ 5 ռ., Ստեփաննոս Պոպովնայ 10 ռ., Մկրտիչ և Ովսեանայ Բուրջախան 10 ռ., Մկրտիչ Սիմէօն և Մննա Սուրբաբեկխան 10 ռ., Մարգիս և Մանուշակ Հախվերդիան 10 ռ., Սարգիս և Եղիսարէթ Թեւեթովնայ 10 ռ., Յովհաննէս

իր Ռոստոմ անունը փոխելով, կուզեցաւ վախերիան Գրիգորիկի Մաղաթով:

Որպէս իր իշխանական տիտղոսը ստացաւ նա Ս. Պետրոսեղոս Մէլիք-Շահնազարխան Մէլիք-Ջուռլուի հնորած վկայականով (տես զլ. XXXVI) այժմ իր բարձր փառքով իր հայրնիքը, Վարազդ, վերադառնալուց յետոյ, ցանկացաւ նոյն Մէլիք-Շահնազարխաններին, իր բարեբարների, հայրնական կալուածներին վրա ինքը կալուածատէր լինել: Մէլիք-Խանը ընծայեց նրան վարանդայի գաւառում 15 գիւղեր իրանց ընդարձակ հողերով, սահմաններով և բնակիչներով: Այդ գիւղերը Մէլիք-Շահնազարխանների դարձրաւ կալուածներն էին: Ամբողջ վարանդան, որպէս ընթերցողին յայտնի է, ամենահին ժամանակներից Մէլիք-Շահնազարխանների տիրապետութեան ներքոյ էր գտնվում:

Յիշեալ 15 գիւղերի թիւում գտնվում էր և Չահնազի (Աւետարանոց) բերդը, որի մէջ գտնված էին Մէլիք-Շահնազարխանների ամրոցները. այնտեղ էին Մէլիք-Յուսէին I-ին, Մէլիք-Բադիի և Մէլիք-Շահնազար II-րդի պալատները: Իշխան և նրա տեղում իր համար մի նոր պալատ հիմնեց: Երբ նրանից հարցրին, ինչու էք քանդել տալիս, նա ծիծաղելով պատասխանեց. «Երբ Մէլիք-Շահնազարը այդ պալատը շինել էր տալիս, ես զեռ մանուկ էի. նա ինձ շատ քարեր է կրել տուել այդ պալատի շինվածքի համար. մինչև այսօր էլ այն ցաւը զգում եմ մէջքիս վրա»...

Մէլիք-Խանի պարգեւագրի բովանդակութիւնը, որով իշխալ 15 գիւղերը ընծայվեցան իշխան Մաղաթովին, ինքն ըստ ինքեան ցոյց է տալիս այդ պարգեւագրի ինչ բնաւորութեամբ հեղինակված լինելը: Խանը իր պարգեւագրի մէջ յայտնում

Չախմախանց 10 ռ., Եղիսար Մարտիրոսանց 5 ռ., Թովմաս Նազարեկեանց 10 ռ., Շամիր Կուրճեանց 2 ռ., Յարութիւն Թեւեթովնայ 10 ռ., Պետրոս Ֆրանգուկեանց 10 ռ., Չաքարիա Կրասիւնիկեանց և Մարգարիտ Բունիաթեանց 10 ռ., Պետրոս Պոպովնայ 3 ռ., Յարութիւն Խանեանց 10 ռ., Չիլիկեանց 5 ռ., Գոստինցեանց 10 ռ., Անյայտ ոմն 5 ռ., Խաչատուր Լալայեանց 10 ռ., Սիմէօն և Մարիամ Պոպովնայ 10 ռ.: Ընդամենը 165 ռուբլ:

Ընդունեցէք, զիցարդոյ խմբագիր, և այլն:

Սիմէօն Պոպովնայ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննայի «Journal d'Orient» լրագրի խմբագրութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ դադարել է ուղարկել իր թերթը այն բաժանորդներին, որոնց բաժանորդագրութեան ժամանակամիջոցը անցել է: Լրագրին գրվել ցանկացողները կարող են կամ «Մշակի» խմբագրութեանը դիմել կամ ուղղակի Վիեննա, հետեւալ հասարակ հասցեով: Vienne (Autriche) F. Salles 1. Neuer Markt 9.) Լրագրի գինը ամբողջ տարվայ համար արժէ 8 ռուբլ, իսկ կէս տարվայ 4 ռուբլ:

Թուս լրագիրները հարցրում են որ Չինաստանի և Եպոսիայի մէջ յարաբերութիւնները չարված են: Եպոսիական տէրութիւնը պատերազմական պատրաստութիւններ է տեսնում և ամեն կերպ աշխատում է իր կողմը գրաւել Ռուսաստանի համակրութիւնը:

ԱՍԽԱԲԱԼԱՔԻՑ մեզ գրում են: «Տեղիս փոստային կառավարիչը մեր քաղաքից գրված մի քանի լուրերի պատճառով փոստային վարչութեան վերաբերութեամբ, նեղացած է այն անձանց դէմ, որոնց վրա կասկած է տանում թէ «Մշակին» են թղթակցում: Այդպիսիների հետ նա խտտութեամբ է վարվում, անչափ պատճառ:

Ե, որովհետեւ իշխան Մաղաթովի նախնիքը վաղեմի ժամանակներից Վարազդում տիրապետում էին իշխալ 15 գիւղերին իրանց ընդարձակ սահմաններով, իսկ իշխանի բացակայութեան ժամանակ այդ կալուածները խլիկեան (ովքեր խլեցին), ուստի ինքը խանը այդ գիւղերը կրկին վերադարձնում է իշխանին, որպէս իր նախնիքների օրինաւոր ժառանգը և այլն:

Իսկ ովքեր էին նրա նախնիքը,—յայտնի է: Ունեին արդեաք նրանք կալուածներ,—այն ես յայտնի է...

Թէ որ աստիճան իշխան Մաղաթովի մատը գործել էր այդ պարգեւագրի խմբագրութեան մէջ, յայտնի է նրանից, որ իշխանը ստացաւ այդ գիւղերը իրանց բնակիչների հետ ճորտութեան իրաւունքներով: Ճորտութիւնը թէ պարսկական և թէ տաճկական Հայաստանում երբեք գոյութիւն չէ ունեցել:

Իշխանը թէև ծնված էր Վարազդում, բայց իր կրթութիւնը ստացած լինելով ուսուց մայրաքաղաքների բարձր ազնուական շրջաններում, նոյն ժամանակվայ արիստոկրատիայի ոգով էլ դարձացած էր: Ռուսաստանում այն ժամանակ մի անհրաժեշտութիւն էր. նոյնը ցանկացաւ քրտցնել իրան ընծայված գիւղերի մէջ: Հասկանալի է, որ մի այսպիսի օտարութիւն էր և նոյն ժամանակ անմարդասեր նորաձեւութիւնը պիտի գրգռէր նրա դէմ գիւղացիների դժգոհութիւնը մի կողմից, իսկ Մէլիք-Շահնազարխանների ժառանգների բողոքը միւս կողմից, որովհետեւ իշխալ կալուածները նրանց տուին էին պատկանում:

Բայց ամենապատկաւրան այն էր, որ իշխան Մաղաթովի վարմունքը թուրքերից Վարազդի բոլոր տիրապետող մէլիքների ժառանգական ի-

ներով ուղարկում է նրանց լրագրող տալը, կամ վերադարձնում է նրանց այն նամակները որ նրանք կամենում են փոստով ուղարկել ուրիշ քաղաքներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՍԻ ՌԵԲԱԿՈՄԻՏԻՆԸ

„Standart“ լրագրի թղթակիցը գրում է Ալեքսանդրիայից: Նոր արտիկերիայի ծովային առաջին պատերազմը կատարված է և տարված: Ռմբակոծութեան օրը ժամի հինգին նաւատորմը հրամաններ էին ստացել և շոգինները պատրաստել էին: Հինգից քառորդ անց „Helicon“ նաւը մոտենում էր ծովապետի նաւին և նշան տալիս, որ թիւը օֆիցերներ է բերում: Նրանք յայտնեցին, թէ եգիպտական կառավարութիւնը պատրաստ է ամրոցները զինաթափ անել: Ծովապետ Սէյմուր պատասխանեց, որ բանակցութիւնների ժամանակը անցել է: Օֆիցերները ծովապետից խնդրեցին իր պատասխանը գրաւոր տալ և այդ թուղթը ստանալուց յետոյ հեռացան: Ժամի 7-ին զրահակիր „Alexandra-ին“ հրաման տրվեցաւ առաջին թնդանօթը արձակել: Ծովի վրա սարսափելի ձայնիւն լսվեցաւ և անմիջապէս հետաքրքրվեցան այն հարցով, թէ արդեօք եգիպտական թնդանօթները կը պատասխանեն, թէ նրանք կը մարքեն ամրոցները: Նրբ յայտնվեցաւ, թէ եգիպտացիները ընդունում են կռիւը, անգլիական նաւերը հրաման ստացան անկախ գործել: Մի վայրկեանից յետոյ օդը ծածկվեցաւ թանձր ծուխով: Թնդանօթների որոտումը սարսափելի էր: Հուռով նկատվեցաւ, որ խեղդիկ պալատը այրվում է: Նրբ ամբողջ նաւատորմը մասնակցեց գործին, եգիպտական թնդանօթները սկսեցին լուել մէկը միւսի ետեկց: Ամրոցները քանդվում էին Վաւօղի մի քանի պահեստներ Ալեքսանդրիայի մէջ օդը ձայնեցան: 12 ժամին եգիպտացիների թնդանօթները լուեցին գրեթէ ամբողջ գծի վրա: Նրանք այլ ևս ան-

կարող էին գործել, որովհետեւ գրեթէ բոլորն էլ քնած էին: Պատասխանում էր միայն Միկս ամրոցը, որի թնդանօթները ծեփելու համար նաւերից ցանկացողները կանչվեցան: Վերջինների թիւը հարկաւոր եղածից աւելի էր և այդ պատճառով նրանցից միայն 12 մարդ ընտրվեցան, որոնք աջողութեամբ կատարեցին տուած յանձնարարութիւնը: Ժամի 4-ին կէս օրից յետոյ Ալեքսանդրիայի մէջ բարձրացրին զինադադարման դրօշակը և այդպիսի դրօշակով եգիպտական մի նաւ մօտեցաւ անգլիական նաւատորմին բանակցելու: Համար: Ալեքսանդրիայի մէջ սպանվածների թիւը մեծ պէտք է լինի, որովհետեւ մի քանի ռուս բերքաղաքի մէջ ձայնվեցան: Անգլիական նաւատորմը շատ աննշան փնտներ կրեց: Միայն մի քանի մարդիկ սպանվեցան և վիրաւորվեցան:

ԱՌՍՏՐՈ-ՌԵՆԳԱՐԻԱ

Մի քանի նշաններէից երևում է, որ Աւստրո-Ռենգարիան եգիպտական հարցի պատճառով կամենում է զտովել միւս պետութիւններից և հետեւել մի ինքնուրոյն և բաւական օտարադէպ քաղաքականութեան, գրում է „Голосъ“: Քանի որ բոլոր պետութիւնները վերաբերվում են Ալեքսանդրիայի ռմբակոծութեանը իբրեւ մի փաստի, որ թէպէտ ցաւալի էր, բայց մի և նոյն ժամանակ Արաբի-փաշայի յարձակողական գործողութիւնների հետեւեց էր, աւստրիական կառավարութիւնը գրեթէ բացարձակ բողոքում է այդ ռմբակոծութեան դէմ, թոյլ տալով աւստրիական պաշտօնական լրագիրներին պախարակել „անգլիական նաւատորմի աւերող ձեռնարկութիւնը“: Այդպիսի վարմունքին առիթ տուեց ջարդ-Վիլի կի պարլամենտական յայտնութիւնը, թէ գերմանական և աւստրիական կառավարութիւնները պաշտօնապէս հաւանութիւն տուն անգլիական կառավարութեան գործադրած միջոցին: Աւստրիական կիսապաշտօնական լրագիրները եռանդով հերքում

են անգլիական արտաքին գործերի մինիստրի օգնականի այդ յայտնութիւնը, յայտնելով, թէ „անգլիական կառավարութեանը չի աջողվի ուրիշ վրա բարձել Ալեքսանդրիայի մէջ պատահած անցքերի պատասխանատուութեան մասն անգամ“: Կարծես թէ առանձին նշանակութիւն տալով այդ կիսապաշտօնական բողոքին, աւստրիական կառավարութիւնը միակ է, որ զօրքեր չուղարկեց Ալեքսանդրիա և այդպիսով չը վաւերացրեց կատարված փաստը: Այս բոլորը շատ օտարադէպ է: Եգիպտական հարցի վերաբերութեամբ զտովելով միւս պետութիւններից, Աւստրո-Ռենգարիան կարծես կամենում է եգիպտական ապստամբների կամ Թիւրքիայի կողմը բռնել, որ նոյնպէս բողոքեց Ալեքսանդրիայի ռմբակոծութեան դէմ: Հեշտ չէ հասկանալ, թէ ինչի համար Վիեննայի մէջ հարկաւոր համարեցին խախտել պետութիւնների հաւանութիւնը: Եթէ այդ բանն անվում է Բ. Կրանը հաճոյանալու համար, ուրեմն հաշիւը շատ անաջող է, որովհետեւ անցքերը հետզհետէ այնպիսի պատկեր են ստանում, որ Թիւրքիայի գերը եգիպտական հարցի մէջ չափազանց փոքրացնում է: Մինչև անգամ այն դեպքում, եթէ Թիւրքիան կուղարկի իր զօրքերը Եգիպտոս, նրանք այնպիսի պայմաններով այնտեղ կերթան, որոնք աւելի էլ կը փոքրացնեն Թիւրքիայի նշանակութիւնը, իբրեւ մահմետական աշխարհի կենտրոնի: Բայց թիւրքաց միջամտութիւնը եգիպտական գործերին հազիւ թէ կայանայ: Աւելի հաւանական է, որ այդ միջամտութիւնը կը փոխարինեն եւրօպական պետութիւնները և վերջին լուրերն են փարիզից առիթ են տալիս կարծել, որ Ֆրանսիան էլ կը մասնակցի այդ միջամտութեանը, բաժանելով Անգլիայի հետ եւրօպական հաւատարմատարի դերը: Փարիզի մի նիստրական մամուլի նշանաւոր ներկայացուցիչները կարծիք են յայտնում, որ Անգլիայի հետ համաձայն պէտք է գործել, խոստովանելով վերջապէս, որ Ֆրանսիական հասարակական կարծիքը միաձայն պահան-

ջում է Ֆրանսիայի միջամտութիւնը, և յոյս յայտնելով, թէ պատգամաւորների ժողովը կօգնէ կառավարութեանը կատարել այն գործը, որ վիճակվել է Ֆրանսիական հասարակութեանը:

Ֆրանսիական նաւերը անգլիականների հետ միասին արդէն պահպանում են Սուէզի ջրանցքը: Վաղ թէ ուշ եգիպտոսում կերեայ Ֆրանսիական զօրաբաժինը և միւս պետութիւնների յանձնարարութիւնը, եթէ մինչև անգամ Աւստրիան կանջառվի, այդ գործին եւրօպայից վաւերացրած միջադէպին ձեռնարկութեան բնաւորութիւն կը տայ:

Ուրեմն ի՞նչ կը շահի Աւստրո-Ռենգարիան հեռու մնալով այդպիսի համաձայնութիւնից: Աւստրիական շահերը եգիպտոսի մէջ այնքան աննշան են, որ Վիեննայի կառավարութեան բողոքը ոչինչ ազդեցութիւն չէ կարող ունենալ կատարվող անցքերի վրա: Եթէ Վիեննայի մէջ չեն ցանկանում այդ անցքերի պատասխանատուութեան իրանց մասը կրել, ոչ ոք դրանից իրան ներշնչված չի համարի, բայց կը գտնվեն մի քանի պետութիւններ, որոնք ուշադրութեամբ կը հսկեն Աւստրո-Ռենգարիայի և Թիւրքիայի փոխադարձ յարաբերութիւնների վրա և չեն թողնուիր այդ պետութեան ազդեցութեան մեծանալը լինի Կ. Պօլսի մէջ: Եւրօպայից անջատվելով և նրա հետ անբաւականութիւն ունենալու գնով Աւստրիան անկարող է Բօսնիան և Հերցեգովինան վերջնականապէս իր հետ միացնել: Եթէ մինչև այժմ այդ նահանգների միացնելը Աւստրիայի հետ ցանկալի չէր Ռուսաստանի համար, կարող է պատահել, որ ապագայում ռուսաց կառավարութեան հայեացքները Բօսնիայի և Հերցեգովինայի հարցի մասին պաշտպանութիւն կը գտնեն Անգլիայի մէջ, որին աւստրիական կիսապաշտօնական լրագիրները մեղադրում են քաղաքական „աւաղակութեան մէջ“:

բաւանդները, և դրա հակառակ բարձրացրեց խառնի նշանակութիւնը:

Նրբ որ նա խանի պարզակտրով ընծայ ստացաւ 15 դիւղեր, շատ հասկանալի է, որ այդ պարզակտրով վաւերական դարձնելու համար, ինքը, իբրեւ տեղային նահանգային-դիւղերական գլխաւոր, որ կարգված էր խանի գործողութիւնների վրա հսկելու համար, ոչ միայն ստիպված էր ճանաչելու խանի մէջ բաշխելու և ընծայելու իրաւունքը, այլ պիտի աշխատէր այդ իրաւունքը ճանաչելու տալ և ուստաց կառավարութեանը, որը դեռ ևս տեղային գործերի հետ լաւ ծանօթ չէր: Միւս կողմից, նա պիտի աշխատէր ոչնչացնելու մէլիքների տիրապետական իրաւունքները, երկրի տէր և իշխանը ցոյց տալով միայն խանին: Այսպէս էլ վարվեց նա:

Գրա հետեւեցը այն եղաւ, որ Մէհմեդ-խանը սկսեց Վարաբադի բուն, արմատական կալուածատէրերին (որպէս էին հայոց մէլիքները, վանքերը և հայ ժողովուրդը) գրկել և նրանց հողերը աջ և ձախ բաժանել իր ազգականներին և մերձակորներին: Հայոց մէլիքներից այդ ժամանակ նշանաւոր մարդիկ էին Միսցիկ, որ կարողանային խանի ղեկնակցելու մասին բողոքել, տեղեկութիւններ տալ, ուր որ հարկն էր: Իսկ իշխան Մազաթովը, որպէս ասում են, մատնելի միջոց էր նայում խանի անկարգութիւնների վրա, և թոյլ էր տալիս նրան բաշխումներ անել, պարգևներ տալ, որպէս զի իր ստացածը ևս օրինական ձև ստանայ, այսինքն՝ խանի մէջ հաստատվի ընծայելու, պարգեւելու իրաւունքը:

Ով որ ուշիւ-ուշով քննել է Վարաբադի խոշոր կամ մանր կալուածատէրերի ձեռքում գտնված թղթերը, անպատճառ նկատած կը լինի, որ այդ թղթերը, խիստ մասնաւոր բացատրութեամբ, գրված են Մէհմեդ-խանի ժամանակներում և վաւեր-

բացրած են նրա կնիքով: Իսկ Մէհմեդ-խանի նախորդների փառնիք-խանի և Կրքահիմ-խանի ժամանակներից, որոնք աւելի զօրաւոր մարդիկ էին, որոնք մի ժամանակ ամբողջ Վարաբադը իրանց իշխանութեան ներքոյ ունէին,—այդ խաներից տուած խիստ հագլու են գտնվում այնպիսի թղթեր, որ դրանք որ և իցէ մէկին դիւղ կամ մի մեծ կալուածք ընծայած լինէին:

Այդ առատ բաշխումները կատարվեցան Մէհմեդ-խանի ժամանակ, երբ ռուսները տիրել էին Վարաբադին և երբ իշխան Մազաթովը կարգված էր տեղային նահանգային-դիւղերական գլխաւոր և նրան յանձնված էր հսկել խանի գործողութիւնները վրա:

Թէ որպիսի մարդիկ էին ստանում գիւղեր, ընդարձակ կալուածներ, մենք կը բերենք մի քանի օրինակներ:

Ֆարաջուլլայ-բէկ, Ռահիմ-բէկ, Կրքահիմ-բէկ և Հասան-բէկ եղբայրները ստացան Մէհմեդ-խանից 8 գիւղեր: Կրքահիմ հայրը (Ուղուրլու) Մէհմեդ-խանի հօր մօտ գահձի պաշտօն էր կատարում:

Մէհմեդ-խանի զաթրէի (Յորեպան) Մուրադի որդիք՝ Վալի-բէկ և Թալիբ-բէկ նոյնպէս ստացան մի քանի գիւղեր:

Տեղ անունով հայաբնակ գիւղը, որը մի քանի հարիւր տուն բնակիչ ունի, պատկանում էր հայ ազգի Մէլիք-Ղոյսղին: Այդ գիւղից մի հասարակ հայ մշակ տարել էին Շուշի բերդի պարիսպների վրա բանեցնելու: Բողոքներն նրան շատ էին աշխատեցնում, նա արկիւթութեամբ մահմետականութիւն ընդունեց և կոչվեցաւ Ղասրմ: Այդ Ղասրմի որդի Ռուստոմ-բէկը զարձաւ Մէհմեդ-խանի տան նաղիւր (անուար), իսկ վերջինի որդի Ասադ-բէկը խանից պարգև ստացաւ Տեղ գիւղը:

Պատմում են, երբ Մէհմեդ-խանի եղբոր որդի Ֆաթա-Ղոյսղ-խանը նկատեց, որ նա Վարաբադի

գիւղերը այսպէս առատութեամբ բաժան-բաժան է անում, ինչն ևս 12 գիւղերի ցուցակ կաղմեց, և որովհետեւ իր յարաբերութիւնները իր հօրեղբոր հետ լաւ չէին, վերոյիշեալ նաղիւր Ռուստոմ-բէկի միջնորդութեամբ ներկայացրեց Մէհմեդ-խանին, խնդրելով, որ իր անունով հաստատէ ցոյց տուած գիւղերը: Ռուստոմ-բէկը 12 գիւղերի պարգեւով գրեւ տուեց, և խանի կնիքով վաւերացնելով, յանձնեց Ֆաթա-Ղոյսղ-խանին: Իսկ այդ վերջինը, մի քանի օրից յետոյ փոշմանեց, ինչու հայոց ինքնակալ գիւղը ևս չէ մտցրել այն ցուցակի մէջ, որովհետեւ այդ գիւղը Շուշի բերդի բաւական մօտ էր և կարող էր իր համար լաւ ամառանոց լինել: Նա կրկին գիտնում է նաղիւր Ռուստոմ-բէկի միջնորդութեամբ: Նաղիւրը, պարսից սովորութեան համեմատ, խանի պարգեւագրի լուսանցքի (հաշիպ) վրա աւելացնում է ինքնակալ գիւղի անունը և ներկայացնում է կնիքելու: Բայց Մէհմեդ-խանը զարմանում է, նա բնաւ չէ յիշում, որ մի այդպիսի պարգեւագրի տուած լինել իր եղբոր որդուն, որին սաստիկ ասում էր: Նա փոխանակ կնիքելու, թուղթը պատուում է և մի կողմ է ձգում: Բանից զուրս է գալիս, որ սկզբում այդ թուղթը խանին վաւերացրել էին տուել այն բողոքների մէջ, երբ նա բնական դրութեան մէջ չէր գտնվում...

Մէհմեդ-խանը սովորութիւն ունի սաստիկ մեծ քանակութեամբ ռուս գործ ածելու և խիստ հագլու էր պատահում, որ նա զգաստ դրութեան մէջ գտնվէր:

Եւ այսպէս Մէհմեդ-խանի ազգականները, ջորեպանները, Կրքահիմները և այլ մերձակորները, չէր արդար ստանալով, մի և նոյն ժամանակ ստացան գիւղեր, ընդարձակ հողեր և այլն: Իսկ այդ բոլորը խլիվեցաւ հայոց մէլիքների սեպականութիւնից:

Բայց այդ անկարգութիւնները երկար չարու-նակվել էին կարող: Ամենքը գիտէին, որ ռուսաց կառավարութիւնը վերջի վերջոյ կը հասկանար այդ ղեղձուները և խանի կամայականութեամբ սահման կը դնէր:

Մի և նոյն ժամանակ գիտէին և այն, որ մշտական արբեցութեան մէջ գտնվող Մէհմեդ-խանը խիստ վատ յիշողութիւն ունի. նա իր երեկեայ ասած խօսքը, ասած թուղթը կարող է այսօր մերժել: Այդ էր պատճառը, որ խանի դրութիւնից օգուտ քաղողները աշխատեցին մի կերպով հեռացնել նրան Վարաբադից, որպէս զի, նրանից ստացած թղթերը պահպանէին իրանց նշանակութիւնը:

Մէհմեդ-խանը բաւական երկշուտ մարդ էր: Ամեն կողմից սկսեցին վախեցնել նրան, թէ ռուսները դիտաւորութիւն ունեն նրան սպանել տալու, Սիբիր ուղարկելու և այլն: Ասում են, թէ ինքը իշխան Մազաթովը նոյնպէս կողմնակի կերպով նպատակում էր խանի անվտանգութեանը:

1822 թին Մէհմեդ-խանը փախաւ Պարսկաստան *): Բայց նրա փախուստը ճանապարհ բաց արեց պարսից թագաւորանոց Աբաս-Միրզայի 1826 թի մի նոր արշաւանքին դէպի Վարաբադի և Գանձակի կողմերը, որը ռուսներին բաւական հոգսեր պատճառեց, և որի ժամանակ հայերը դարձեալ ցոյց տուին իրանց անձնատիրութիւնը:

(Կը շարունակվի)

*) Պատմում են, որ խանի փախուստը այն ստորիման շտապով կատարվեցաւ, որ կնիքը մահացմամբ թողնել իր քարտուղար Միրզա-Ջամալի մօտ. և խանի բացակայութիւնից յետոյ այդ կնիքը երկար ժամանակ գործ էր անվում...

ամերիկացիների օրինակին կը հետևեն: Եղիպտոս-
ցիների կորուստը աւելի մեծ է, քան թէ կար-
ծում էին, այն ինչ սպանված քրիստոնեաների
թիւը 500-ից չէ անցնում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հետաքրքիր աւելի: Բուխարէստան ուղ-
ղի դատարանի մէջ այս օրերս քննվում էր եր-
կու կոչակարների մի շատ հետաքրքիր գործ:
Այդ կոչակարները մեղադրվում էին այն բանի
մէջ, որ նրանք դիւրեւով մի այգեպանից մի քանի
հարիւր գեղեցիկ վարդեր էին գողացել: Մեղա-
դրվածներին յաջողվեցաւ ապացուցանել իրանց
«անմեղութիւնը» մէջ բերելով alibi, որ կայանում
է նրա մէջ, թէ նրանք հէնց նոյն գիշերը, նոյն
ժամին սալատ էին գողտրում մէկ բանջարանո-
ցում, որ գտնվում է քաղաքի բոլորովին ուրիշ
մասում:

«News-York Times» լրագրի խօսքերով, մի տա-
րի առաջ, Ուլենգաուտ անունով մէկը, որ բնակ-
վում է Նիւ-Եօրկում, Անտիքրպէնից 18 աղանի-
ներ բերեց: Գրանք գեղեցիկ թուղաններ էին և
շատ թանկ էին գնահատվում: Բայց այն խիստ
բանտարկութիւնը, որ Ուլենգաուտ հարկաւոր հա-
մարեց ներթափել նրանց, ազգեց նրանց առողջու-
թեան վրա: Թուղաններ կորցրին իրանց նախ-
կին աշխոյժը, և անցեալ ամսվայ սկզբին նը-
բանցից մէկը սատկեց: Կարծելով, որ արդէն բա-
ւական ժամանակ անցել է, որ աղանիները ըն-
տելանային իրանց նոր հայրենիքին, Ուլենգաուտ
չաբաթ առաւօտեան 17 աղանիներ արձակեց
բանտարկութիւնից: Երեկոյեան 14 աղանիներ
տուն վերադարձան, իսկ երեքը չէին վերադառ-
նում ոչ նոյն, և ոչ հետեւել օրը: Երկու օր անց-
նելուց յետոյ Լիվերպուլից Նիւ-Եօրկ հասաւ
Medusa նաւը: Կապիտան Զիդնբերգ այցելեց Ու-
լենգաուտին նրան տեղեկացնելու համար, որ նը-
րա աղանիներից մէկը գտնվում է իր նաւի վրա:
Կապիտանը ասեց, որ կիրակի, աղանին նուտեց
նաւի վրա այն ժամանակ, երբ նաւը 150 մղոն
հեռացել էր ափից: Նաւաստին, աղանուն ընե-
լով, կամենում էր նրանից իրան համար նախա-
ձայնիկ պատրաստել, բայց նրա վրա գտնված
տոմսակը Ուլենգաուտի անունով, աղանեց աղա-
նու կեանքը: Աղանու ընդունած ուղղութիւնը
Նիւ-Եօրկից ուղիղ գիծ էր դէպի Անտիքրպէն,
և դա սպասույց է, թէ ինչ դարմանալի բնադրում
ունեն այդ թուղանները, մանաւանդ աւելի ևս
զարմանալի է այն պատճառով, որ արդէն մէկ
տարի անցել էր այն ժամանակից, որ այդ թու-
ղանները Ամերիկա բերվեցան: Ինչ որ վերաբը-
րում է մնացած երկու աղանիներին, Ուլենգաուտ
կարծում է, որ նրանք ևս փորձ են փորձել անց-
նել ովկանոսի տարածութիւնը և շատ հաւա-
նական է որ ճանապարհին կորել են:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՏՐՈՒՐԿ, 13 յուլիսի: «Голосъ»
հաղորդում է, Յուլիսի 11-ին Մոսկվայի
երկաթուղու վրա ճանապարհորդների գնաց-
քը ուղարկելուց առաջ հեռագիր ստացվե-
ցաւ, որ Յարեյից չորս վերստ հեռու
փոս կազմվեցաւ երեք վերստ տարածութեան
վրա: Գնացքները պահվեցան մինչև այդ
տեղի հետազոտելը, որի շուրջը այժմ ճանա-
պարհորդները ուղղով են անցնում: «Но-
восты» լրագիրը հաղորդում է, Լուր է
տարածված, որ Յազանբոգի գեղծութեան
մասին դժուարեանները հասցրած են Ս.
Պետերբուրգ այգրան թաց, որ անկարելի է
թերթը թերթից բաժանել: Օրէնքների
ժողովածուի մէջ հրատարակված է Բար-
ձրագոյն հաստատված կանոնադրութիւնը
կայքերի մէկից միւսին անվարձ անցնելու
ի միջի այլոց ժառանգութիւնների հարկի
մասին: Կայքի գումարից ամուսինները և
երեխաները վճարում են 1 տոկոս, աւելի
հեռու ազգականները 4—6 տոկոս, քնա-
ցած անձինք 8%: Հաստատված են նոյն-

պէս կայքերի գնահատութեան կանոնները:
Ս. ՊԵՏԵՐՏՐՈՒՐԿ, 13 յուլիսի: Օրէնքների
ժողովածուի մէջ հրատարակված է, երբոր
կայքերը անցնում են առանց հողի, հար-
կից ազատվում են 1,000 ռուբլուց փոքր
գին ունեցողները, գիւղական բաժիննե-
րը և կայքերը, որոնք անցնում են
բարեգործական և ուսումնարանական հիմ-
նարկութիւններին, եկեղեցիներին և վան-
քերին: Այդպիսի կայքերի գնահատութեան
ժամանակ հանվում են չը վճարված աշ-
խատանքի վարձը, պարտքերը և թաղման
ծախսերը: Բարձրագոյն հաստատված են
նահանգական և շրջանների մասնաժողով-
ներ խմբիքների առևտրի հարցի սկզբնա-
կան մշակութեան համար:

Ս. ՊԵՏԵՐՏՐՈՒՐԿ, 13 յուլիսի: Պետական
բանկի 5% տոմսակը առաջին շրջանի ար-
ժէ 94 ռ., երկրորդ 90 ռ. 37 կ., երրորդ
90 ռ. 75 1/2 կ., չորրորդ 90 ռ. 25 1/2 կ.,
հինգերորդ 90 ռ. 5 կ., ներքին 5% առա-
ջին փոխառութեան տոմսակը արժէ 212 ռ.
25 կ., երկրորդ 210 ռ. 75 կ., արևելեան
առաջին փոխառութեան տոմսակը արժէ
89 ռ., երկրորդ 89 ռ. 50 կ., երրորդ 89
ռ. 37 կ., ոսկի 8 ռ. 23 կ.: Ռուսաց 1 ռուբլ
Լժուգոնի վրա արժէ 24,06 պէս, Ամստը-
րձամի վրա 124 ռ. 25 պէս, Ռուսաց 100
ռ. Համբուրգի վրա արժէ 205 մարկ, 25 պֆ.,
Փարիզի վրա արժէ 252 ֆրանկ 50 սան-
տիմ: Բօրսայի տրամադրութիւնը թիւլ է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԵՅ առաջին հունձի այս տարի չա-
փազանց դժնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ
ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է
25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ
տեղ: Օրինակ. Լաւ ԿՈՆԴՈ թէյ 1 ռ.—1 ռ.
20 կօպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ռ.
40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ռ. 60 կ.
այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ռ.—2 ռ.
50 կ., գեղեցիկ ԿԱՅՍԱՍԻ թէյ 1 ռ. 80 կ.
և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ռ. մա-
քուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովո-
րաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀԱԿԱՆ-
ՆԵՐ 6 ռ.—60 ռ., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամ-
բողջ Անդրկովկասի համար, շօխաղ ֆրայ,
Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ-
ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացանների ԴԱՌԻ,
ԲԵՎՈՒՎԵՐՆԵՐ ՎԵՐԻ, ՌԱՄԲԵՐ Բարնբերի,
Կօլմանի նըշըշայ, ԱԼԲՈՒՆԵՐ Շփարցի կէս
գնով: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ,
ԹԻՖԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ
ԳԱՆՆԵՐԻՑՈՒՄ № 156, 157, 158,
159 և 100:

1—100

Ներսիսեան դպրանոցի բարձր դասա-
տան աշակերտներից մինը կամենում է պա-
տրաստել աշակերտներ և աշա-
կերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների
ստորին և միջին դաստանց համար: Ցան-
կացողք թող դիմեն Ծովլանովի կարվա-
սարայում պ. Գրիգոր Կակեանի խանութը
№ 1.

ԻՐԱՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
ՆԵԱԿ, Գօրվիկսի պրօսպեկտի վրա,
տուն ճարտարապետ Բելօի: Գրասենակը
բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—
10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
րից և մեծ տօներէից:

Օսկերիշխանումը արվում է տուն վար-
ձով վերի յարկ № 22. պայմանի մասին
հարցնել Կուկիա Միխայիլովի փողոցում
Բեալական վարժարանի հանդէպ. № 56.
4—5

Պատիւ ունիմ յայտնել պատվելի հասա-
րակութեանը որ Սօլուակից տեղափոխվել
եմ Գոլովիկսի պրօսպեկտի վրա Տրիգուլ-
վի տունը և ամսիս 4-ից բացել եմ իմ կօն-
դիտերի և հացեղների մագազինս «Вар-
шавская пекарня» անունով, որտեղ
ծախում եմ կօնֆէկտներ, պիրօժնի, պէչե-
նի, մուրաբա, սուխարի, կուլիչ, տորտ,
բուլկի, զանազան տեսակ հացեղէններ, և
տաք պիրօժնէք, շատ ձեռնտու գներով իսկ
զաւառացի վաճառականներին մեծ զիջու-
մով նմանապէս ընդունում եմ ամենայն
տեսակ կօնֆէկտէրի և հացեղէնի պատ-
ւէրներ աւելի արժան քան ուրիշները, այն-
տեղ ևս կարող են դիմել սօլիտերով հի-
ւանդներ դեղ ընդունելու համար թէ ան-
ձամբ և թէ զրաւոր:

ՄԱՐՏԻՐՈՍ ՀԱՆՆԱՐԱՆԵՐՑ
5—10

ՄԻ ՀԱՄԱԼԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂ, որ այժմ
արդէն Մանգլիսում է ապրում, յանձն է
տունում պարսպել երեխաների. հետ թէ
արքունական և թէ հայոց ուսումնարան-
ների աշակերտների և աշակերտուհիների
հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հե-
տեւալ հասցեով. Манглицъ, Габріэль
Мирзоевъ, въ рошѣ, дача Марѣи
Тимофѣевой.

Въ Редаціи газеты

«МШАРЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМІЙНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . . 8 roubles

6 mois. . . . 4 —

S'adresser à F. Salles, avocat

1. Neuermarkt 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

ՄԻՋԻ փողոց, Կաթօլիչեւկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԵՆԵՍԻԱ ՄԵՐԵԼ ամե-
նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱՐՆԵՐ 8—30 ռ., չա-
մադաններ 250—25 ռ., սակվոյաժներ 1. 30—12 ռ., սուռն դուկն եր ճա-
նապարհի 6—35 ռ., մարաններ (погребы) 6—25 ռ., սա մօ վարն եր
60 կ.—1.25 ֆունտը, կուխոնի պղնձե ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով
ամաններ, ու մի վալնի կն եր մրա մօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ
երկու լուլանի 6—32 ռ., ու վոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30
ռ., պատրոններ. (գուլաններ) ընկուղի, սիգար Ռէնգարդի ֆարիկից. պապի-
րոս և թամբաբու կուշնարովի գիլի պապիրօգի. 5,000 ֆունտ թէժ (այ) ԵՂ:
ՊԱՊՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլիէմի. կօֆէ էլիէմի և
Միխայիլի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ
28 կ.—240 ռ., պրօրկայ գինեկաճանների, հանքային և զարնջի (дн
зельтерскихъ водѣ и пива) դուլթուկ (пучѣ), պապիտներ սամովարի և
չայու, դանակ չանդալ զանազան ֆարիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուլթուր.
գրչակովթեր 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ռ., դա-
նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիօր.
միս կարելու մաշինայ. Անգլիական ուլթոներ, Բրիտանիկ չայիկներ, կաֆէ-
նիկներ ամենայն տեսակ, Չաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Չուր մաքրելու,
կրակավ կարօրկէն 18 կ., փաքս ճարմանայի ծակոյ, թուղթ փոշաի, կանկրտ-
ներ, սուրգուչ, մառիտ, գրիչ երկաթէ, գրչակովթ, քարետախտակ, թանաք,
թանաքամաններ, պրեսպապիկներ, գլայներ սեղանի և չայու ֆրաժէ, փարշավի
և բրիտանիկ դուլթուր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
միչէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պոլ-
սապրկաններ վարչավու, Ռեզնի ԿԱՆՈՇՆԵՐ, ամեն տեսակ, դուլթաններ կա-
նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց գալուս-
տիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և շոքի սանդղեր շի-
մայու ոսկորէ, գուտապիլոնի և փայտէ, չոտկաներ գլխի, շոքի, սապիկի, պոլի և
կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատկի կօժի և շալէ (гарусѣ) ֆէլ-
չալէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիտաներ, պապիրօսի ամաններ
և մանր գոյանտերիցի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.,
կտոր, հոտալէտ ջրեր, պուրթա, Գլիցերին ջրի քացալ, հոտալէտ պարաշոկներ
ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապ-
րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՅԵԼ ՏԵՐ ՆԻԿՈՂՈ-
ՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի ան-
կիւնում № 13.

Օտարաբարաբացիք կարող են դիմել հետեւալ հասցեով. Тифлисѣ Ми-
хаилу Н. Теръ-Никогосову.

92—180

ՄԻՋԻ փողոց, Կաթօլիչեւկայա փողոցի անկիւն № 13.